

Թը ախորժեկի տպաւորութիւն կը գործէին տեսնողին վրայ: Գլխուն վրայ վարդարուն փաթթոց կը կրէր ու մօրուքը սեւ շրջանակ մը կը դէժէր դէմքին շուրջ. արեւելցի ճշմարիտ միապետ մը կը նստէր դահին վրայ՝ եւրոպացի պատգամաւորին առջեւ: Իրականէն աւելի երիտասարդ կ'երեւէր: 1695-ին անգլիացի ճամբորդներն ալ այսպէս կը հաստատէին:

Ունկնդրութիւնը վերջանալու ատենները միայն խօսք բացաւ ամէնէն կարեւոր խնդրին շուրջ. այն է թէ Փիսքոփոսէն ու Ապետիքէն կը խնդրէ թէ դարձեալ Եւրոպա դառնան ու այս անգամ իր անունով խօսին եւրոպացի միապետներուն հետ զինուորական դաշինք մը կնքելու մասին:

Շահը շուտով կարդադրութիւն պիտի ընէր որ պատգամաւորներուն համար պատրաստուէին յանձնարարական թուղթեր ու նամակներ Պապին եւ թագաւորներուն ուղղուած: Միաժամանակ պիտի հոգար յանձնարարականներ դրացի պետութիւններուն մէջէն անցնելու համար ալ. հետեւաբար նաեւ Ռուս Զարին դրելու: Փիսքոփոս հաղիւ կրցաւ հարցնել թէ արդեօք Աւստրիա - Հոմէական կայսեր ու Հոնգարիոյ թագաւորին համար ալ նամակ պիտի ունենա՞յ:

— Ո՛հ, պատասխանեց Շահը, որովհետեւ կարեւոր կը համարեմ նախ բերանացի կատարել դաշինքի նախապատրաստութիւններն ու մանրամասնութիւնները:

Պապին հետ դաշնադրութիւնը անցեալին մէջ ալ նամակադրութեամբ կատարուած էր, ուստի ներկայիս ալ կը շարունակուէր. մինչ Վիեննայի հետ յարաբերութիւնները դեռ չէին սկսուած: Ուստի ճիշտ այս յանձնարարութեամբ է որ կը զրկէր Փիսքոփոսը եւ Ապետիքը, որպէսզի իր անունով կայսրին հետ խորհրդակցին կարելիութիւններու մասին:

ԳԼՈՒԽ 2.

ԱՊԵՏԻՓ ԿԸ ՄԵԿՆԻ ՀՈՒԳԱՐԻԱ

Քանի մը շարաթ վերջ պալատական մը բերաւ ընծաները. ոսկեման թանկագին հագուստներ, արծաթով ու ակունքներով ընդելուղուած պատմութեաններ ու գլխանոցներ: Քառասուն թուական արժողութեամբ դանաղան ոսկի դրամներ եւ ականակուռ փաթթոցներ, որոնք Շահին հաճութիւնը ցոյց կու տային պատգամաւորներուն հանդէպ: Յաջորդ օրը հասան նաեւ ուրուստած ու կնքուած նամակներ ալ, որոնց մէջ կային նամակներ ուղղուած բոլոր իշխաններուն, առաջնորդներուն եւ փոխարքաներուն եւ ուրիշ պաշտօնեաներուն, յանձնարարելով որ պատուով ընդունին ու լաւ վարուին պատգամաւորներուն հետ, մինչեւ որ պարսկական հողին վրայ են անոնք:

Շահին կարդադրութեան համաձայն անոնք պէտք էին իրենց արտաքինովն ալ պարսիկներ երեւէին, որ միայն Փիսքոփոսին տարօրինակ կու դար, մինչ պարսկահայ Ապետիքի համար նորութիւն մը չէր ներկայացներ: Երբ Դոմինիկեան վարդապետը պարսկական չքեղ հագուստներով ներկայացաւ Շահին առջեւ՝ միապետը չկրցաւ իր բարձրաձայն ծիծաղը զսպել: Քանի մը դուարթ խօսքերէ վերջ Շահը յանձնեց նամակները եւ այս արարողութեամբ երկու քրիստոնեաները, որոնցմէ մէկը քահանայ, պարսիկ դեսպաններ դարձան:

Իրերը այնքան շուտ տեղի ունեցան որ Փիսքոփոս ու ընկերը եւ ոչ իսկ ժամանակ ունեցան մտածելու եւ խորհրդակցելու իրենց ընկերներու մասին: Նոյն ժամանակի ճամբորդութեան դժուարութիւնները նկատի առնելով, պէտք չենք դարձանալ թէ հեռաւոր երկիրներու արքունիք-

ներու մէջ մտած ըլլայ այն սովորութիւնը թէ ճամբորդութեան եւ ուրիշ շատ մը դժուարութիւններու պատճառով իրենց հասած եւրոպացի դեսպանները փոխադարձ իրր իրենց դեսպանները վերադարձնէին: Միւս կողմէ նաեւ Փիսքոփոսի եւ Ապետիքի դեսպանութիւնը յատուկ վրստահութեան ու պատուի ալ նշան մըն էր: Շահը որ շատ մը քրիստոնեայ երկիրներու եւ քաղաքներու ալ տէր էր, շատ բնական կը տեսնէր քրիստոնեայ միապետներու քրիստոնեայ դեսպաններ զրկել: Այս սովորութիւնը մտած էր գլխաւորաբար Ս. Աթոռի դեսպաններուն հանդէպ: Ընդհանրապէս նոյնպէս որ Փիսքոփոսին հետ հասած երկու կրօնաւորները վերադարձած էին Հոմ՝ Շահին նամակով: Մահմետական դեսպաններուն ալ շատ անգամ կ'ընկերակցէին քահանաներ. իսկ Ապետիքի պարագային, որ պարսկահայ էր, ազգային կէտն ալ փրկուած կ'ըլլար:

Միւս կողմէն թէ ինչ կը մտածէին մեր եւրոպացի դեսպանները այս նոր յանձնարարութեան ժամանակ, իրենց վարուելակերպն ու գործը լիովին պատասխան պիտի եթէ այլակրօն միապետ մը չահելով՝ քրիստոնեայ դաշնակցութեան նպատակը չէր զարուստ մտնէին բարձր եկեղեցական կարգերուն մէջ անգամ չէին զարմանար իրենց կրօնական եւ ո՛չ ալ քաղաքա-նո՛չ իրենց կրօնական եւ ո՛չ ալ քաղաքական համոզումներէն ստորակէտ մ'անդամ փոխելու պէտք չունէին այս նոր պաշտօնին պատճառով:

Այս կերպով ահա Փիսքոփոսն ու Ապետիքը քիչ վերջ դարձեալ Նաչիւրուան կը տեղափոխուէին, որ քրիստոնեաները մեծ բազմութեամբ հաւաքուած՝ արցունքոտ աչքերով հրաժեշտ առին մեծագոր Շահի դեսպաններու փոխուած իրենց նախկին

առաջնորդներէն: Կարճ հանգիստէ մը վերջ Ապետիքեանք ճամբայ ելան քաղաքէն՝ բեռնաւորուած Կաղղուանի սատրապներու ընծաներով:

Զինուորականներու եւ ծառաներու երկար խումբէ մը պաշարուած աշխուժօրէն կը դիմէին հիւսիս - արեւմտեան ուղղութեամբ՝ դէպի Կասպից ծով: Պարսկաստանի արքունիքի բարձր պաշտօնեաներէն մէկը մինչեւ ծովեզերք ընկերացաւ իրենց: Նաչիւրուանէն սկսեալ, տեղական սովորութեան համաձայն բարձրադասակ ուրախակցութիւններով կ'ընդունէին անցորդները. երաժշտութիւն, փողեր ու թմբուկներ անպակաս էին: Ուրախութիւնը մեծ կ'ըլլար մանաւանդ քրիստոնեայ աւաններու մէջ՝ երբ իմանային ճամբորդներուն ո՛վ ըլլալը եւ թէ ինչ պատճառով Եւրոպա կը վերադառնային:

Թէեւ Պարսկաստան Ապետիքի ընտանիքին որրանը եղած էր, սակայն մեր դեսպանը քիչ մը ժամանակ անցընելէ վերջ՝ միշտ աւելի կը զգար Եւրոպա դառնալու փափաքը, որ զինքն ալ արեւմուտցի մը դարձուցած էր: Սիրով կը կենար Արեւելքի մէջ, ուր Շահին շրջանակը միշտ աղնիւ վերաբերում մը ցոյց տուած էր իրեն հանդէպ. եւ ինքն ալ իր գրութիւններուն մէջ միշտ սիրով կը յիշէ Պարսկաստանը: Սակայն իր էութիւնը որ եւրոպացի քաղաքագետի մը փոխակերպուեցաւ Հոմ-մէական բիւրեղանման յստակ իմաստասիրութեան ազդեցութեամբ, իտալական տաճարներու ու պալատներու հովանիներու տակ, ու Դոմինիկեան վանքերու լը-ոութեան զով շունչով՝ չէր կրնար տեսականօրէն համակերպիլ հեռաւոր Արեւելքի նեղ շրջանակին:

Կասպից ծովու ափին վրայ ողջոյն տալով ընկերող պարսիկ իշխաններուն, Ապետիքեանք նաեւ մտան ու դէպի հիւսիս ուղևորուեցան: Հովը սակայն փոփոխութիւններ ուղղուեցան: Հովը լայնացան գիրուկ նաւին առաջաստները

կ'ուղեցնէր, մղելով դէպի հանդիպակաց ափը, դէպի նոր հորիզոններ: Մովսիսին այս ճամբորդութիւնը հաճելի է՝ եթէ կասալից ծովը ենթակայ չըլլայ շարունակական փոթորիկներու: Սակայն կ'երեւի թէ Ապետիքեանք անվտանգ կատարեցին ճամբուն այս մասը, որովհետեւ իրենց առջեւ չուտով երեւցաւ Վոլկայի ճախճախոտ գետաբերանին վրայ շինուած Նա-կայի-Թաթարներու երբեմնի մայրաքաղաքը՝ Աստրախան: Քաղաքը տափարակ էր, պարիսպով չընկալուած ու միշտ մեծ շարժում կար մէջը, որովհետեւ ուսու-պարսիկ առեւտրական փոխանակութիւններու կեդրոնն էր: Քաղաքին մէջ տեղը կը բարձրանար Ձար իւանի կառուցած դղեակը: Այն ժամանակները քաղաքը տակաւին լի էր թաթարներով, որոնք մեծ յարգանքով կը խնամէին իրենց պետերու դամբանները, յուշարձաններն ու ազգային սովորութիւնները: Յաճախ քրիստոնէական սովորութեան նման, թաթարական դերեզմաններու առջեւ կը տեսնուէին վառ ճրագներ ու մոմեր: Ապետիքեանները հանդէսէ վերջ նաւէն ելան ու քանի մը օր քաղաքը անցուցին, սպասելով Ռուս Ձարի հովանաւորող հրովարտակին, որուն կանխաւ իմացուցած էին իրենց գալուստը:

Վերջապէս Մոսկովայի սուրհանդակը հասաւ, որ ինքզինքը ներկայացուց պաշտօնական արարողութիւններով, եւ հանդիսաւոր կերպով հրաւիրեց երկու պատգամաւորները Ձարի կողմէն որ հաճին ոտք դնել իրենց տէրութեան հողին վրայ, ու ինքզինքնին նկատեն իրենց հայրենիքին մէջ. միաժամանակ կը խոստանար անոնց պետական ամէն օժանդակութիւն եւ հովանաւորութիւն:

Ապետիք ու իր ընկերները անմիջապէս

ճամբայ ելան, սկսելով իրենց ուղեւորութեան ամէնէն վտանգաւոր ու տաժանելի մասերէն մէկը: Թէեւ Եւրոպական-Ռուսիոյ մէջ կը ճամբորդէին, սակայն ասիական քան միայն կը նշանակէր թէ այդ երկրամասը Ձարի գերիշխանութեան տակն էր, բայց իսկական տէրերը տակաւին թաթարներն էին. աւելի ճիշտ՝ այն թաթար խումբերը որ իրենց պետին առաջնորդութեամբ թափառաշրջիկ կ'ապրէին, զբաղելով որսորդութեամբ, ձկնորսութեամբ եւ շատ անգամ ալ աւաղակութեամբ:

Նոյն տարին Վոլկան սովորականէն կանուխ սառած էր, այնպէս որ երկու դեսպանները եւ իրենց հետեւորդները ո'չ թէ նաւով, այլ բազմաթիւ փոքրիկ սահնակներով ստիպուեցան շարունակել իրենց ճամբան:

Դէպի Եւրոպայի մայրաքաղաքները տանող ճամբան Աստրախանէն հիւսիս կ'երկարէր Վոլկայի եզերքը: Բազդատմամբ ամէնէն անվտանգ ու բնակուած մասն էր ասիկա: Ձարին պաշտօնեաներն ալ ընդհանրապէս այս ճամբան կ'ընէին. ուստի Ապետիքեաններն ալ այս ուղին ընտրեցին:

Ճամբորդութիւնը ամենեւին հաճելի ընդթ չունէր: Թէեւ անոնք Եւրոպայի մէջ էին, սակայն պատկերը իրենց շուրջ եւ բարքերը բոլորովին ասիական կը մնային: Միշտ պատրաստ պէտք էին ըլլալ թաթարներու յանկարծական յարձակումներուն դիմադրելու համար. իսկ իրենց առաջնորդ ու ընկերացող զինեալ գունդը պիտի չկարենար դիմադրաւել թաթար մեծկակ խումբի մը:

Ապետիքեանները արագօրէն կը յառաջանային:

Թրգմ. Հ. Ա. Ֆ.

(Շարունակելի)

ՄԱՐԱՇԱՀԱՅ ԲԱՐՔԵՐ

(Շար. տես Բազմ. 1953, թ. 4-5, էջ 83)

Հոգեգալուստն ալ ունի իր ութօրեայ պահքերը, որոնց « Հոգու-պոք » կ'ըսէ ժողովուրդը:

Պահքերու շարքին կարելի է յիշել նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Վարդապետի շարժական պահքերը:

Վարդապետը եղանակին ամէնէն շուրթալից տօնն է: Արեւը կըսի կը թափէ ամէն կողմ: Շաբաթ երեկոյ, երբ աստղեր կը ծաղկին երկնքին վրայ, դիւիւսը կ'անցնի մեղմահունչ, զովութիւն սիրունով իր չորս դին: Կ'ըսեն թէ ջուրերը կը յորդին այս գիշեր: Շատեր կը լողնան, երազելով որ ոսկիի փոխուի այդ զով ջուրը: Ուրիշներ՝ կարկաչահոս ակերը կ'երթան ներկայ գտնուելու ջուրի յորդումին:

Կէս գիշերէն յետոյ սակայն, երբ տակաւին խաւար է ամէն կողմ, ընտանիքներ խմորովին թաքստաւոր կ'երթան ուխտի:

Թաքստաւորը՝ քաղաքին հիւսիսակողմը, երեք քառորդ ժամ հեռու, բարձր բլուր մըն է, որուն գագաթը Ս. Թադէոս առաքեալին նուիրուած տաճարի մը վերաւորականը կը գտնուին: Աւանդութիւն մը կ'ըսէ թէ Թադէոս առաքեալը Մարաշէն անցած ատեն այս բլրան վրայ կը գիշերէ եղեր:

Սեպածեւ տաժանելի վերելքէ մը յետոյ, շատեր բոկոտն, ուրիշներ ծունկի վրայ քալելով կը հասնին ուխտավայրը, իրենց հետ մէյմէկ քար բերելով: Այդ քարերով բացօթեայ խորան մը կը շտկուի: Եւ առաւօտեան մթնշաղին, երբ արեւը իր շողակերտ վրձինով զմայլելի տեսարաններ կը նկարէ հորիզոնի մուսլ պատուին վրայ, ժողովուրդը բարեպաշտ

երկիւղածութեամբ ներկայ է աստուածային պատարագին: Խորանի մոմերը կը մաշին քաղցրաթրթիւ բոցերով. քաղցրալուր մեղեդիներու ծփանքը կը հեռանայ համատարած լուսեան մէջ: Ամէնուն սիրտը եւ հոգին, այս դալարագեղ բարձունքին վրայ, աւելի մօտ կը դգայ ինքզինքը Աստուծոյ. ջերմեռանդ շրթունքներ, եռանդալի իրենց իղձերուն կատարումը կը հայցեն Բարձրեակէն: Յաւարտ պատարագին, ամէն ոք իր ուխտը կը կատարէ՝ գառնուկ մը, աքլոր մը, կամ աղանի մը մորթելով: Ամբողջ միտք, հոգ կամ եփած կը բաժնեն քաղաքին աղքատներուն:

Կ'ըսուի թէ ուխտավայրին մէջ, բարեպաշտներէն ոմանք երբեմն խուսկի հոտ կ'առնեն եւ հրեշտակային երգեր կը լսեն:

Եկեղեցական արարողութիւններէն յետոյ ժողովուրդը վար կ'իջնէ, եւ բլուրին ստորոտը, Քառասուն ալ (Գրեզ-կէօզ) կոչուած աղբիւրին շրջակայքը մինչեւ երեկոյ ուրախ օր մը կ'անցընէ:

Չմայլելի է Քառասուն ակերու տեսարանը: Բնութիւնը հոն չուայլած է ամէն գեղեցկութիւն: Ի՞նչ քաղցրաբոյր օդ. ի՞նչ սառնորակ ջուրեր, որոնք հեղասահ կը կարկաչեն, քնարներու պէս անոյշ, բիւրեղներու պէս պայծառ: Ոստախիտ ծառերու շուքին տակ, զմրուխտի պէս կանաչ մարմանդին վրայ, զուարթ ծափեր ու ծիծաղներ կը խառնուին առուակներու մրմունջներուն:

Ձիւրար ջրելու տօնն է այսօր: Տարիքոտները պարզ արարողութեան մը ձեւով քիչ մը ջուր կը սրսկեն իրարու վրայ եւ բարեմաղթութիւններ կը փոխանակեն իրարու: Ձուր կը սրսկուի նաեւ սենեակ-